

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ 2905 <ԱՎՏՈՄՈՐԻԼԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ԵՎ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Պաշտոնի (զբաղմունքի) անվանումը	Ավտոմոբիլային ճանապարհների և օդանավակայանների շինարարություն և շահագործում
I. Դերը	Կազմակերպել և /կամ/ կառավարել ավտոմոբիլային ճանապարհների և աներողումների շինարարություն, շահագործում, նորոգում և պահպանում շինարարական և շահագործական կազմակերպություններում և ձեռնարկություններում, կամ դրանց ստորաբաժանումներում: Ապահովել շինարարական և շահագործական կազմակերպություններում և ձեռնարկություններում տարբեր ստորաբաժանումների միջև սերտ համագործակցություն՝ ուղղված շինարարական, շահագործական, նորոգման և պահպանման աշխատանքների արդյունավետ և որակյալ կազմակերպմանը՝ յուրաքանչյուր որոշարկված դեպքում հաշվի առնելով կազմակերպություններում և ձեռնարկություններում ներքին հնարավորությունները, աշխատանքային պայմանների առանձնահատկությունները, տեխնիկական ու տեխնոլոգիական հագեցվածությունը, ինչպես նաև մարդկային ռեսուրսների որակական հատկանիշները: Վերահսկել ամենօրյա աշխատանքները, հերթափոխի գրաֆիկները, աշխատանքի և կենսագործունեության անվտանգության, բնապահպանական պահանջների պահպանումը, հարկ եղած դեպքում հանդես գալ արդյունավետ խորհրդատվությամբ:
II. Խնդիրների բնագավառները	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքների կազմակերպում և կառավարում, -իրականացնել ավտոմոբիլային ճանապարհների և աներողումների շինարարություն և վերանորոգում, -իրականացնել ավտոմոբիլային ճանապարհների և աներողումների շահագործում և պահպանում -իրականացնել որակի հսկում, - տրամադրել տեխնիկական օգնություն, - կատարել տեխնիկական հաշվարկներ:
Խնդիրների բնագավառ 1. Աշխատանքների կազմակերպում և կառավարում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> • Մշակում է աշխատանքային ընթացիկ ծրագրեր, • նախապատրաստում և կազմակերպում է շինարարական և շահագործական կազմակերպությունների ստորաբաժանումների աշխատանքը, • հսկում է իրեն ենթակա ստորաբաժանման աշխատակիցների աշխատանքային գործունեությունն ու կարգապահությունը, • մշակում է աշխատանքային մեթոդների և ձևերի նորացմանն ու կատարելագործմանն ուղղորդված ռազմավարական գործառնություններ. • պատրաստում և վերահսկում է իրեն ենթակա աշխատակիցների

	<p>աշխատանքային գրաֆիկը, <ul style="list-style-type: none"> կատարում է աշխատանքի բաժանում: </p>
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> Կազմված են աշխատանքային ընթացիկ ծրագրերը, ճիշտ է կազմակերպված շինարարական և շահագործական կազմակերպության ստորաբաժանումների աշխատանքային գործընթացը, համապատասխան հանձնարարականները ձևակերպված են հստակ և հասկանալի, ճիշտ են բաշխված աշխատանքային ռեսուրսներն ու ժամանակը, ճիշտ են ներկայացված աշխատանքային նորարարական մեթոդները, ճիշտ է կազմված աշխատակիցների աշխատանքային գրաֆիկը, ճիշտ և արդարացի է կատարված աշխատանքի բաժանումը:
<p>Խնդիրների բնագավառ2. Ավտոմոբիլային ճանապարհների և անրոդրոմների շինարարություն և վերանորոգում</p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> – Նախնական գնահատում է շինարարության վայրը, կապում նախագիծը տեղանքին, – կազմակերպում է շինարարական նյութերի և կառուցվածքների տեղավորման, շինմեքենաների և սարքավորումների տեղակայման աշխատանքները: Իրականացնում կատարվող աշխատանքների հսկում, – կազմակերպում է նախապատրաստական աշխատանքները և իրականացնում կատարվող աշխատանքների որակի հսկում, – կազմակերպում է շինարարական և մոնտաժային աշխատանքները և իրականացնում կատարվող աշխատանքների որակի հսկում, – կազմակերպում է ճանապարհի կահավորման աշխատանքները և իրականացնում կատարվող աշխատանքների որակի հսկում: հայտնաբերում է վերանորոգման ենթակա ճանապարհահատվածները և առանձին տեղամասերը, – կազմակերպում է վերանորոգման ենթակա ճանապարհահատվածների և առանձին տեղամասերի վերականգնման աշխատանքները և իրականացնում կատարվող աշխատանքների որակի հսկում:
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> – Շինարարական նյութերը, կառուցվածքները, շինմեքենաները և սարքավորումները ընտրված են և տեղակայված առավել արդյունավետ տարբերակով պահանջվող նորմերին համապատասխան, – շինմեքենաները և սարքավորումները աշխատում են արդյունավետ պահպանելով բոլոր նորմատիվային պահանջները և տեխնիկական բնութագրերը, – նախապատրաստական և շինարարական աշխատանքները կատարվել են որակով, համաձայն նախագծանախահաշվարկային փաստաթղթերի պահանջներին,

	<ul style="list-style-type: none"> - կահավորման աշխատանքները կատարվել են որակով, համաձայն նախագծանախահաշվարկային փաստաթղթերի պահանջներին, - վերանորոգման ենթակա ճանապարհահատվածը և առանձին տեղամասերը վերանորոգվել են որակով, համաձայն նախագծանախահաշվարկային փաստաթղթերի պահանջներին:
Խնդիրների բնագավառ 3. Ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների շահագործում և պահպանում	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> - Իր իրավասությունների շրջանակներում մշակում է ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների շահագործման և պահպանման վերաբերյալ հրահանգչական փաստաթղթեր, - կատարում է շահագործման և պահպանման աշխատանքների հսկում, - հետևում է շահագործման ռեժիմների և նորմերի պահպանմանը, - հետևում է տեխնիկական սպասարկման միջոցառումների ժամանակին կատարմանը, - հետևում է անվտանգության կանոններով նախատեսված պայմանների պահպանմանը:
<p>Կատարման չափանիշները</p>	<ul style="list-style-type: none"> • առկա են շահագործման տեխնիկական պահանջներին համապատասխան մշակված՝ ավտոմոբիլային ճանապարհների և աերոդրոմների շահագործման և պահպանման վերաբերյալ հրահանգչական փաստաթղթեր, • ՝ավտոմոբիլային ճանապարհները և աերոդրոմները շահագործվում են առանց շեղումների սահմանված պայմաններից և տեխնիկական պահանջներից, • ապահովված են շահագործման անվտանգության կանոնները, ՝ ավտոմոբիլային ճանապարհները և աերոդրոմները գործում են անխափան:
Խնդիրների բնագավառ 4. Որակի հսկում	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<ul style="list-style-type: none"> • Հսկողություն է սահմանում աշխատանքների կազմակերպման մեթոդների և տեխնոլոգիաների նկատմամբ, • հաշվարկում և աշխատանքներ է կատարում համապատասխան քանակությամբ աշխատանքային մեքենաներ, սարքավորումներ և գործիքներ, ինչպես նաև հարակից այլ նյութեր ձեռք բերելու համար, • վերահսկում է աշխատանքային պայմանների և աշխատատեղերի սանիտարահիգիենիկ նորմերը, մեքենա-սարքավորումների շահագործման անվտանգության կանոնները, իրականացնում է վերահսկում աշխատողների և նրանց կատարած աշխատանքի արդյունքների նկատմամբ:
	<ul style="list-style-type: none"> • Պահպանված են աշխատատեղերի սանիտարահիգիենիկ նորմերը, • ձեռք են բերված անհրաժեշտ մեքենաները, սարքավորումներն ու աշխատանքային գործիքները,

Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • տեխնոլոգիական մեքենաներն ու սարքավորումները, շինարարական և շահագործական նյութերն օգտագործվում են արդյունավետ, • աշխատանքներն իրականացված են՝ համաձայն նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պահանջների սահմանված ժամկետներում.
Խնդիրների բնագավառ 5. Տեխնիկական օգնության տրամադրում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Իր ենթակայությամբ աշխատողներին՝ անհրաժեշտության կամ տեխնիկական շահագործման փաստաթղթերով նախատեսված դեպքերում, բացատրում է նախագծեր, գծագրեր, սխեմաներ, պարզաբանում է շինարարության, նորոգման, շահագործման, տեղակայման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկական խնդիրները:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Տեխնիկական օգնություն պահանջող բոլոր իրավիճակների վերաբերյալ աշխատողները ստացել են համապատասխան օգնություն, • աշխատանքները կատարելիս աշխատողներն ունեն անհրաժեշտ ուղղորդող տեղեկություններ, • աշխատանքի ընթացքում չնախատեսված իրավիճակներ չեն առաջանում, իսկ առաջանալու դեպքում՝ այդ իրավիճակները լուծվում են:
Խնդիրների բնագավառ 6. Հաշվարկների կատարում	
Աշխատանքային գործընթացը	<ul style="list-style-type: none"> - Հաշվարկում և նախապատրաստում է տվյալներ իր պարտականություններով սահմանված իրավիճակների վերաբերյալ, - կատարում է պարտականություններով վերապահված առանձին աշխատանքների իրականացման տեխնիկական հաշվարկներ, - կատարում է համապատասխան շինարարական նյութերի, ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների ընտրության հաշվարկներ:
Կատարման չափանիշները	<ul style="list-style-type: none"> • Անսարքությունների և արատների բացահայտման, վերանորոգման, կարգավորման և փորձարկման համար անհրաժեշտ տվյալները լավագույնս հավաքագրվել են, • պարտականություններով վերապահված աշխատանքների կատարման տևողությունը, պահանջվող ֆինանսական միջոցները հաշվարկվել են անթերի, • հաշվարկված են շինարարական նյութերի, ճանապարհաշինարարական մեքենաների և սարքավորումների ընտրման համար անհրաժեշտ պարամետրերը:
Պատասխանատվությունը և բարդության աստիճանը	
Բարդության աստիճանը	Մասնագիտական գործունեության իրականացման ընթացքում առաջադրված բարդ, ոչ ստանդարտ խնդիրների լուծում, իսկ որոշ դեպքերում՝ ընտրված լուծումների հիմնավորում:
Պատասխանատվությունը	Պատասխանատու է իր սպասարկման տեղամասում շինարարական, շահագործման, նորոգման և պահպանման նորմալ և անխափան աշխատանքների կատարման, շահագործման պայմանների պահպանումն ապահովելու, իրեն վերապահված գործառույթների

	<p>վերաբերյալ փաստաթղթերը և ակտերը գործող նորմատիվներին համապատասխան կազմելու համար, ենթականերին և շահագործողներին անհրաժեշտ տեխնիկական օգնություն և խորհրդատվություն տրամադրելու, ճանապարհաշինարարական նյութերը և կառուցվածքները արդյունավետ օգտագործելու, մեքենասարքավորումները ճիշտ տեղակայելու և արդյունավետ շահագործելու, աշխատանքի անվտանգության կանոններին բնապահպանական միջոցառումների պահպանումն ապահովելու, համապատասխան տեղեկությունները վերադասին ժամանակին և սահմանված կարգով տրամադրելու, ենթակաների աշխատանքը կազմակերպելու և աշխատանքային կարգապահությունը ապահովելու համար:</p>
	<p>Մասնագիտական գիտելիքներ, կարողություններ, հմտություններ և վերաբերմունք</p>
<p>Լեզուները</p>	<ul style="list-style-type: none"> • Հայերեն՝ մայրենի • Առաջին օտար լեզու՝ ռուսերեն • Երկրորդ օտար լեզու՝ անգլերեն
<p>Համակարգիչը</p>	<ul style="list-style-type: none"> • MS Word՝ բավարար • MS Excel՝ բավարար • MS PowerPoint՝ բավարար • Internet Explorer՝ բավարար
<p>Գիտելիքը</p>	<ul style="list-style-type: none"> • Վարչարարություն և կառավարում • ճարտարագիտական գրաֆիկա • գեոդեզիա • շինարարական նյութեր և արտադրության մեքենասարքավորումներ • ստանդարտացում, սերտիֆիկացում • մարքետինգ, • որակի հսկում
<p>Կարողությունները, հմտությունները և վերաբերմունքը</p>	<ul style="list-style-type: none"> • Աշխատանքային տեղամասում աշխատողների գործունեությունը կազմակերպելու, նրանց հնարավորությունները ճիշտ օգտագործելու կարողություն, • իրավիճակին համապատասխան մասնագիտական տեղեկություններ տրամադրելու, առկա տեղեկությունների հիման վրա եզրահանգումներ կատարելու կարողություն, • աշխատանքների կատարման առավել արդյունավետ տարբերակները ընտրելու, փոփոխվող աշխատանքային պայմաններում հիմնավոր որոշումներ կայացնելու և վերլուծություններ կատարելու կարողություններ, • շինարարական նյութերի որակի նախնական գնահատման կարողություն, • շինարարական մեքենասարքավորումները շահագործելու կարողություն, • շինարարական մեքենասարքավորումների պարամետրերը չափելու և հսկելու կարողություն, • շինարարական որակյալ աշխատանքներ կատարելու կարողություններ և հմտություններ • արատների և անսարքությունների բացահայտման, վերացման և

	<p>վերանորոգման աշխատանքները կազմակերպելու և կատարելու հմտություններ,</p> <ul style="list-style-type: none">• տարածքը չափագրելու հմտություններ,• հաշվարկներ կատարելու հմտություն, <p>նորմատիվ փաստաթղթերից, ստանդարտներից և տեխնիկական պայմաններից օգտվելու հմտություն</p> <ul style="list-style-type: none">• հաշվետվություններ և այլ փաստաթղթեր կազմելու կարողություն և հմտություն,• պարտաճանաչություն,• կարգապահություն,• ուշադրություն և դիտողունակություն,• վերլուծական մտածողություն,• համագործակցելու պատրաստակամություն,• հանդուրժողականություն,• նորն ընդունելու պատրաստակամություն,• հետաքրքրություն նորագույն տեխնոլոգիայի և տեխնիկայի նկատմամբ:
--	--